

15 Եւ զայս բանս¹ որպէս ի շնորհէ Աստուծոյ սպարապետին² Հայոց Վարդանայ տեառն Մամիկոնէից ասացեալ³, զոր հռչակելոց էր զնահատակութիւնն որ առ Աստուած ի դարս յաւիտենից: 16 Եւ զայսպիսի ասացմունս լուեալ թագաւորին Պարսից եւ ամենայն աւագանւոյ⁴ դրանն՝ մեծաւ շնորհակալութեամբ զարմացեալք գովեցին զնա եւ գոհացան. քանզի ծածկեաց Աստուած զբան խոստմանցն, զոր ասաց գործել սպարապետն Հայոց Վարդան՝ յաղագս մեծի անուան համբաւոյ, զոր պարգեւեաց նմա Աստուած զանուն նահատակութեան յազգս յաւիտենից:

17 Եւ հրաժարեալք այնուհետեւ յամենեցունց⁵ երեքեան աշխարհքն, Հայք, Վիրք եւ Աղուանք, առեալ ընդ ինքեանս⁶ զդասս բազմութեան մոգունց՝ դարձան յիւրաքանչիւր աշխարհս, հաստատեալ բազում անգամ եւ ի ճանապարհին զնոյն ուխտ երդման Աւետարանին սրբոյ: 18 Հրաժարեալք եւ ի միմեանց՝ զնացին յիւրաքանչիւր յաշխարհս⁷, ազդ առնել միմեանց ի ժամանակի ըստ Աստուծոյ հրամանատրութեանն՝ զպետս գործոցն, զոր խորհեցան կատարել: 19 Բայց զբղէշին Վրաց զԱշուշայ եւ զերկու որդիս իշխանին Սիւնեաց Վասակայ, զԲաբիկ եւ զԱմիրներսեհ⁸, ոչ արձակեաց թագաւորն Պարսից Յազկերտ ընդ այլ նախարարացն Հայոց. հայելով ի յառաջիկայ իրացն անյայտութիւն՝ կասկածեալ զգուշացաւ:

ԻԹ. Արդ՝ եկեալ հասանէին տանուտեարքն Հայոց հանդերձ սեպհաւքն որ ընդ ինքեանս⁹ յաշխարհս Հայոց, ողջք եւ ոչ ողջք, կենդանի կիսամեռք. որք ոչն տեսանէին ըստ յառաջ լուսաւոր եկիցն ողջամբ յայնպիսի հեռաւոր ճանապարհէ: 2 Եւ ելեալ ընդ առաջ նոցա դասք պաշտաւնէիցն Զրիստոսի, բերելով ընդ ինքեանս զնշան կենսատու խաչին եւ զնշխարս սրբոյ առաքելանման նահատակին Գրիգորի, զձայն սաղմոսաց, զորս երգեաց¹⁰ մարգարէն Դաւիթ սուրբ Հոգւոյն շնորհիւ, որում եւ ինքեանք երբեմն ձայնակից եղեալ¹¹՝ առաւելագոյն քան զպաշտաւնեայսն նուագէին զերգս երկնաւոր ցնծալից ուրախութեամբ: 3 Այլ անդ էր լսել զձայնս լալոյ¹² եւ զձայնս գուժի,

1 ՏՏ. զայս բան

2 Ձ. ասպարապետին

3 ՁԱտ. վարդանայ ասացեալ տեառն մամիկոնէից

4 Ձ. աւագանւոյ

5 Ձ. ամենեցունց

6 Ձ. ընդ ինքեան

7 ՏՏ. աշխարհս

8 Թերեւս ուղղելի՝ զԱմիրներսեհ

9 ՁԱտ. որն եւ ընդ ինքեանս. ԲԳտ. եւ որ ընդ ինքեանս

10 ՏՏ. զոր երգեաց

11 ՏՏ. եղեալք

12 ՏՏ. զձայն լալոյ